ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Դաշտ համայնք, Մաշտոցի 34
Հեռ.՝ 094 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվական N 21

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի «29»
Դաշտ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Դաշտ գյուղական համայնքի
ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 21 որոշման

1. Օրակարգը հաստատելու մասին
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
3. Հողամասը ուղղակի վաճառքով վաճառելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, Դաշտ
Հեռ.՝ 094 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվական N 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի ութերորդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի հատակագիծը և հողամասի սեփականատիրոջ 22.09.2020թ ներկայացրած դիմում-հայտը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքում գտնվող Նաիրա Ֆելիքսի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող (Սեփականության իրավունքի վկայական N17042020-04-0011) 047-037-0149-0013 կադաստրային ծածկագիրը կրող 1.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասից 0.6 հա մակերեսով հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական գործառնական նշանակության հողատեսքի՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

4.ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ

5.ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի «29»

Դաշտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ
Հեռ.՝ 094 404 402
Էլ. փոստ՝ dashthamaynq@list.ru
Համայնքային կայք՝ dasht.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվական N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով «ՎՓԱ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ-ի 23.09.2020թ. դիմումը և համայնքի ղեկավարի 23.09.2020թ. առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվախների օբյեկտների նպատակային նշանակության Կոմունալ ենթակառուցվախքների գործառնական նշանակության 04-037-0152-0003 ծածկագրի տակ գտնվող / Վկայական N 08072020-04-0117/ Դաշտ համայնքի Արևելյան փողոցի նրբանցք 1 հողամաս հասցեում գտնվող 0.2222 հեկտար հողամասը հողամասի կադաստրային արժեքով՝ 1 173 216 (մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր տասնվեց) ՀՀ դրամ գնով ուղղակի վաճառքով օտարելու՝ օտարելու համար գնման նախապատվության իրավունքով առաջարկություն ներկայացնելով հողամասին կից վարելահող հողամասի սեփականատեր «ՎՓԱ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ-ի (Գրանցման համար273.110.1139179), քանի որ օտարվող հողամասը գտնվում է «ՎՓԱ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմանագծի ներսում, շրջապատված է այդ հողամասով, չունի ճանապարհ

կամ դեպի հողամաս տանող այլ ուղի և փաստացի օգտագործվում է «ՎՓԱ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ-ի կողմից:

2. Հողամասի վաճառքի գին սահմանվում է մեկ քառակուսի մետրի համար 528 (հինգ հարյուր քսանութ) ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, վաճառքն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՀՈՒՆՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ
5. ՂԱՐԻԲՅԱՆ ՎԱՐԴԿԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի «29»
Դաշտ համայնք